

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պարմասկան գիտությունների թեկնածու

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԻԵՌ ՔԻՅԵԱՌԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Պիեռ Քիյետոը (1864-1912 թթ.), մինչ իր վաղաժամ մահը լինելով «Պրո Արմենիա» երկ-
շաբաթաթերթի անփոփոխ գլխավոր խմբագիրը, Օսմանյան կայսրությունում տեղի ունե-
ցող իրադարձությունների մասին իր տեղեկությունները պարբերաբար ստացել է գլխավո-
րապես Արևմտյան Հայաստանից և ըստ այդմ՝ նրա ուսումնասիրությունների գերակշռող
մասը ձեռք է բերում նաև սկզբնաղբյուրի նշանակություն:

XIX դարի 90-ական թվականների կեսերին զանազան քաղաքական կողմնորոշում
ունեցող եվրոպական մի շարք գործիչներ անկողմնակալորեն լուսաբանել են հայկական
զանգվածային կոտորածների ընթացքը, խարազանել Թուրքիայի հայաբնակած քաղաքա-
կանությունը, ինչպես նաև մեծ տերությունների՝ հայ ժողովրդի հանդեպ դրսևորած անկա-
րելից վերաբերմունքը: Քիյետոը, սակայն, ի տարբերություն այլոց (Ժ. Կլեմանսո, Ժ. Ժո-
րես, Դ. Կոշեն և ուրիշներ), իրադարձությունների եվրոպացի եզակի ժամանակակիցնե-
րից է, որն այդ ամենից զատ անդրադարձել է նաև հայ ժողովրդի մղած ազատագրական
պայքարին և փորձել, սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաննե-
րում, հավոր պատշաճի արժեվորել հայ ֆիդայիների ծավալած պայքարի մանրամասները:

«Հայերին հաճախ մեղադրել են արիության բացակայության մեջ,– գրում է նա,– և շա-
տերը զարմանում են, որ երեք հարյուր հազար մարդիկ թույլատրել են իրենց սպանել
«ինչպես ոչխարների»՝ առանց դահիճների դեմ դիմադրություն կազմակերպելու: Սակայն
մոռանում են ասել, որ թե՛ Կոստանդնուպոլսում և թե՛ նահանգներում կատարելապես ան-
զեն հայերը գտնվում են կանոնավոր զորքերի, ոստիկանների և համիդիների կամ գերա-
զանց զենքերով զինված ոչ պաշտոնական, սովորական մարդասպանների դեմ հանդի-
ման... Փոխարենը, ամենուր, որտեղ հայերը զենք ունեն՝ այնպես, ինչպես հելլեն պալի-
կարներն ու արմատուները և սերբ կամ բուլղար հայդուկները, գիտեն, թե ինչպես պաշտ-
պանվեն»¹:

Ազատագրական պայքարի օրինաչափությունը Քիյետոը հիմնավորում է օսմանյան
ռոնատիքության պայմաններում օրինականության կատարյալ բացակայությամբ: Նրա
համոզմամբ՝ կայսրության տարածքում, ուր գոյություն է չունի օրինական ճանապարհով
հասարակական կարծիքի դրսևորման որևէ եղանակ, ուր չկան մամուլի ազատություն
կամ նույնիսկ «խորհրդակցական ժողով» և որտեղ ամեն ինչ կախված է զահակալի հայե-
ցողությունից, հարկ է, որ հրաշք տեղի ունենա, որպեսզի վերջինս կամովին հրաժարվի
սնսահմանափակ իշխանությունից: «Հրաշքի բացակայության պարագայում,– նշում է
նա,– միակ ազդու միջոցը մնում է ազատամիտ մարդկանց կամքը, որոնք նախապես ան-

¹ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, Paris, 1902, p. 83.

մնացորդ մվիրաբերել են իրենց կյանքը»²:

Իրատեսակամ այս մտնեցումն իր արտացոլումն է գտել Քիյեաոի՝ Հայոց ցեղասպանության մասին դեռևս առաջին՝ 1894 թ. Սասունի կոտորածներին մվիրված հոդվածում, որը լույս է ընծայվել Մորիս Լևելը կեղծանունով³: Այստեղ Քիյեաոը, հպանցիկ անդրադառնալով արևմտահայության կացությանն Օսմանյան կայսրությունում XIX դարում, իրավամբ մատնանշում է, որ հայերը դարեր շարունակ «ուժի դեմ ուժով գործելու» ցանկություն չեն դրսևորել, թեև քաոորդ դարից ի վեր, մրա կարծիքով, «գիտակցել են տարրական, այդ թվում, կողոպուտին և կոտորածին դիմակալելու իրավունքներ ունենալու անհրաժեշտությունը»⁴:

1894 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սասունի տարածաշրջանում հայերի՝ իրենց անողոքաբար կողոպտող հարստահարիչների հետ զինված ընդհարումների մեջ մտնելը Քիյեաոը մեկնաբանում է այն անելամելի կացությամբ, որում գտնվում էին տարեկան վեց կամ յոթ անգամ կեղեքիչ հարկեր վճարելու անկարող սասունցիները⁵: Ինչպես տեսնում ենք, Քիյեաոն ի սկզբանե հայ ժողովրդի ազատագրական պայքարը պայմանավորում է օսմանյան վարչակարգի ծավալած հարստահարություններով:

Հաջորդ ելույթներում, իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, թուրք ելուզակների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը Քիյեաոը դիտում է իբրև հարկադրաբար կյանքի կոչված ինքնապաշտպանություն: 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում հնչակյանների նախաձեռնությամբ կազմակերպված ցույցի աոիթով, օրինակ, նա ընդգծում է ցուցարարների հիմնական նպատակը, այն է՝ օսմանյան «վերնախավին տեղեկացնել բարեմորոգումների իրականացմանն առնչվող՝ Կոստանդնուպոլսի հայերի ցանկություններին»: Քիյեաոը ցավով է նշում, որ բռնությունների տեղիք տված՝ միանգամայն խաղաղ նպատակ հետապնդող այս գործողության ընթացքում ոստիկանությունը, զինված մահմեդական բնակչության օժանդակությամբ, «կոպտորեն ետ է մղել» ցուցարարներին: Միայն դրանից հետո են հայերն ապաստանել եկեղեցիներում և, ինչպես նա նշում է, մրանցից շատերը, ովքեր «գեները ունեին»՝ վճուել են պաշտպանվել յուրաքանչյուր նոր հարձակումից»⁶:

Հայերի՝ ընդամենը պաշտպանվելու, այլ ոչ թե նախահարձակ լինելու մեծ կարևորություն ունեցող հանգամանքը Քիյեաոը քննարկում է բազմիցս, վկայակոչում 1895 թ. Ջելթոնում, 1896 թ. Վանում և այլուր արձանագրված՝ ազատագրական պայքարի այլևայլ դրվագներ⁷: 1901 թ. ի վեր, կապված Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում սուլթանի հայահալած քաղաքականության սաստկացման հետ, Քիյեաոը պարբերաբար անդրա-

² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er novembre 1905, N 121.

³ M. Leveyre, Les massacres des Sasounkhi // "Revue de Paris", livraison du 1er septembre 1895. Այս հոդվածի մասին մանրամասն տրևս Վ. Պողոսյան, Նամիդյան կոտորածները և Պիևո Քիյեաոը, «Էջմիածին», 2004, Դ, էջ 55-67:

⁴ M. Leveyre, նշվ. աշխ., էջ 75:

⁵ Նույն տրևում, էջ 79-80:

⁶ P. Quillard, Diplomatie secrète du sultan (novembre 1897 - octobre 1898) // "Revue de Paris", livraison du 15 juin 1899, p. 883.

⁷ Տևս օրինակ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83-88.

դառնում է այս հարցին. «Այսօր նրանք (հայերը – Վ. Պ.) պաշտպանվում են, ինչպես արդեն պաշտպանվել են Զեյթունում, Սասունում, Օսմանյան բանկում, – գրում է նա 1901 թ.: – Արդեն նույնիսկ այն տարածաշրջաններում, ուր կայսրական կամքի կատարածուններն ամենադաժան ձևով ավերածություններ են սփռել, հայտնվել են վրիժառուներ, որոնք ուժին դիմակայում են ուժով և սպանում իրենց ազգության դաժիճներին»⁸: Քննարկելով 1904 թ. ապրիլի 10-ից մայիսի 5-ը Սասունում տեղի ունեցած դեպքերը՝ նա առանձնացնում է նաև «հայերի հերոսական դիմադրության» իրողությունը⁹:

Զբավարարվելով, սակայն, ընդհանուր բնույթի դիտարկումներով, Քիչեառը համակողմանի վերլուծության է ենթարկում ֆիդայական շարժման հետ կապված զանազան մանրամասներ: Նախ՝ նա հայ վրիժառուներին գերծ է պահում արյունալի իրադարձությունների հետևանքով նրանց վրա բարդվող փոքր-ինչ պատասխանատվությունից, իրադարձություններ, որոնք «վերստին տեղի են ունենում և անընդմեջ շարունակվում հայկական վիլայեթներում... Այստեղ և այլուր ժողովված անհամար վկայություններն ապացուցում են, որ թվում է, թե ցանկացած բնույթի հարստահարումների և տառապանքների ենթակա այս դժբախտների համար, որոնք շրջապատված են թշնամիների վերածված հարևաններով, մահն ազատագրում է»¹⁰:

Այս պայմաններում, Քիչեառը ֆիդայական շարժման առաջ գալը համարում է միանգամայն օրինաչափ¹¹:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ ի սկզբանե լայն տարածում է գտել, այսպես կոչված, «հայկական ապստամբության» հետ կապված տեսակետը, ըստ որի՝ զանգվածային կոտորածների պատճառ են դարձել հայերի «խտվությունները»: Այս հարցի շուրջ 1904 թ. բանավեճի մեջ մտնելով 1898-1906 թթ. Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Թեոֆիլ Դելկասեի (1852-1923 թթ.) հետ, Քիչեառը գրում է. «Երբ ամենավաղագ բռնակալությանը ենթակա մարդիկ զենքի են դիմում և պաշտպանում յուրայինների պատիվն ու կյանքը, դա բռնություն չէ. այդ կոտորածն է, որը բնութագրվում է իբրև գերաշույն իշխանության գործողություն և հեղված արյան համար հարկ է հաշվետվություն պահանջել միայն սույթան Աբդուլ Համիդից»¹²:

Հենվելով զանազան սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունների վրա, Քիչեառը իմնավորապես բացահայտում է Աբդուլ Համիդի նեց գործելամիջոցները, հերքում համիդյան պաշտոնյաների, մասնավորապես՝ Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպան Մուհիթ փաշայի՝ 1904 թ. Փարիզում տարածած ստահող լուրերը, համաձայն որոնց՝ յասունի իրադարձությունները կարող էին վաղուց ի վեր հրահրած լինել հեղափոխականները¹³:

Ընդհանուր առմամբ Քիչեառը գտնում է, որ «երկարատև ու ճարպկորեն հղացած ծրա-

⁸ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 10 septembre 1901, N 20.

⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er juin 1904, N 86.

¹⁰ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 novembre 1904, N 98.

¹¹ Նույն տեղում:

¹² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 juin 1904, N 87/88.

¹³ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er juillet 1904, N 89.

գրին հետամուտ»՝ Աբդուլ Համիդը 1904 թ. զարմանը խորհում էր, որ բարենպաստ պահը վրա էր հասել հայկական նոր կոտորածների ձեռնամուխ լինելու համար: Ըստ այդմ՝ նա ուշադրությունը հրավիրում է հայ ֆիդայիներին մախսապետ վարկաբեկելու ուղղությամբ սուլթանի ձեռնարկած քայլերի վրա: «Միաժամանակ ստահող հեռագրերը տարածում են ֆիդայիների իրականացրած բռնությունների անհշվող լեզնդը.— գրում է նա.— որոնց մեղադրում են մահմեդականների գյուղերում կանանց ու երեխաներին կոտորելու և քուրդ աղջիկներին առևանգելու մեջ: Դա ճշմարտությանը հակասող պատկեր է, քանզի երբ Անդրամիկը գրոհել է Դելմիկ գյուղը, որի բնակիչները նրան ոչնչացնելու նպատակով դավադրություն էին հյուսում, մախքան տղամարդկանց պատժելը, որին վերջիններս արժանի էին, նախ և առաջ՝ քուրդ աղջիկներին և կանանց է վնասազերծել ցանկացած չարիքից՝ ուղեկցելով հայկական ընտանիքներ: Սակայն մախքան ֆիդայիներին ոչնչացնելն ու Սա-սունի և Մուշի հարթավայրի բնակչությանը կոտորելը՝ հարկ էր նրանց վարկաբեկել եվրոպական հասարակական կարծիքի առջև»¹⁴:

Նշենք, որ հայ ֆիդայիներին բնորոշ վեհության ու մեծահոգության էական հանգամանքը Քիլեսում ընդգծել է նաև Խանասորի արշավանքին մվիրված իր գրավոր ելույթում, ուր հավաստում է, որ ռազմական այս գործողության ընթացքում հաղթանակած ֆիդայիներին արգելված էր կողոպտել և բռնություններ գործադրել կանանց ու երեխաների նկատմամբ¹⁵:

Այսպես, վկայակոչելով հայ ֆիդայիների՝ մահմեդական բնակչության հանդեպ դրսևորած բարյացակամությունը, Քիլեսուը միաժամանակ ուշադրությունը բևեռում է մեկ այլ կարևոր իրողության, այն է՝ թուրք ժողովրդի՝ նրանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի վրա: Նրա համոզմամբ՝ ֆիդայիները պարկեշտ վարքագծով «արժանանում են թե՛ նրանց (գորքերի – Վ. Պ.), որոնց՝ հրեշավոր կառավարությունը պարտադրում է ոչնչացնել իրենց, և թե՛ իրենց գործողությունների ակամատեսը դարձած թուրք գյուղացիների հարգանքին ու հիացմունքին... Այդ բնակչությունը (մահմեդական – Վ. Պ.) ևս ստառպում է: Նա արդեն գիտակցում է, որ հայկական ապստամբությունն օրինաչափ է, և որ փրկությունը կարելի է ակնկալել միայն քաղաքակիրթ տերությունների կողմից սուլթանին պարտադրվող բոլորովին այլ վարչակարգի հաստատումից»¹⁶:

Քիլեսուը խորին ակնածանքով է արտահայտվում «աներեր քաջությանը»¹⁷ դեպի մահն ընթացող ֆիդայիների մասին, որոնք, ինչպես նա նշում է, «շուայլորեն հեղել են իրենց հերոսական արյունը հանուն անհուսալի գործի»¹⁸: «Երբեք, ի դեպ, — գրում է նա մեկ այլ առիթով, — ֆիդայիները չեն ցանկացել օգտվելու իրենց գործողությունների պտուղներից: Նրանք, անկասկած, կարող էին ապրիլին (1904 թ. — Վ. Պ.) ստանալ իրենց անձնական անվտանգության բոլոր երաշխիքները: Նրանք այդ չեն ցանկացել, քանզի համատորեն վճռել էին պահանջել նվազագույն բարենորոգումներ, որոնք Եվրոպան, ահա ավելի քան քառորդ

¹⁴ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85.

¹⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 85.

¹⁶ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 novembre 1904, N 98.

¹⁷ Մոյնս փրկում:

¹⁸ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er novembre 1905, N 121.

դարից ի վեր, խոստացել էր նրանց հայրենակիցներին»¹⁹:

Ինչ վերաբերում է ֆիդայիների նպատակներին, ապա դրանք, ըստ Քիչեառի, հանգում էին սուկ հայ ժողովրդի ուսման հարված տարրական իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորման պահանջին: Անդրադատնալով խրիմյան Հայրիկի՝ եվրոպական տերություններին 1904 թ. հղած նամակներից մեկին, որով Հայոց Հայրապետը պահանջում էր ոչ թե ազգային անկախություն, այլ միայն բարեճորդումների իրականացում և ժողովրդի գոյության պահպանության նվազագույն երաշխիքներ, ինչպիսիք են բռնագրավված ունեցվածքը կողոպտված հայերին հանձնելը, վտարանդիներին հայրենիք վերադառնալու թույլտվության ընձեռումը, հայերի ազատ տեղաշարժը թե՛ երկրի ներսում և թե՛ դրանից դուրս, համընդհանուր ներման շնորհումը, քրդերից և չեքեզներից պաշտպանվելու իրավունքը²⁰, Քիչեառը գրում է. «Արդյո՞ք ֆիզիկական և բարոյական տառապանքներից վիատված ֆիդայիները... չարացած սարսափելի պայքարից, որը մղում են հազար անգամ գերազանցող ուժերի դեմ, յուրաքանչյուր պահի հալածվում են և գտնվում մահվան սպառնալիքի տակ, կբավարարվեն նման ողջախոհ և չափավոր պահանջներով: Այսօր դրանում կասկածներ տածելն իսկ չի կարելի: Եվրոպացի հյուպատոսներին Անդրանիկի հանձնած հուշագիրը²¹, որը վերջիններս խոստացել են փոխանցել իրենց կառավարություններին, որևէ հիմնահարցում չի զանազանվում կաթողիկոսի նամակից»²²:

Հարկ է նաև նշել, որ ազատագրական շարժման վերելքը XX դարի սկզբին Քիչեառը պայմանավորում է մասամբ նաև եվրոպական պետությունների կատարյալ անտարբերությամբ: «Եթե պաշտոնական Եվրոպան, — գրում է նա, — չկատարի իր տարրական պարտականությունը, ֆիդայիները չեն թույլատրի սպանել իրենց հայրենակիցներին, որոնց կպաշտպանեն: Սատուհից և այլ վայրերից նրանք կկարողանան հասնել այնտեղ, որտեղ վտանգ ծառանա»²³: Նրա համոզմամբ «եթե եվրոպական միջամտությունը բացառվի, ապա՝ չի կարող լինել որևէ այլ գործնական այլընտրանք, քան հեղափոխական գործունեությունը»²⁴:

Արդեն բուն ազատագրական շարժման ելևէջների առիթով Քիչեառը մեկ անգամ ևս հավաստում է հայ ժողովրդի հաստատակամությունն ու անկտրում կամքը՝ շարունակելու պայքարը: «Եվրոպայում նվազ կամ ոչ այնքան հայտնի՝ համեմատաբար նոր փաստերը հայերին ներկայացնում են այլ լուսի ներքո, — գրում է նա, — և թույլ չեն տալիս նրանց դիտել իբրև նախախնամության կողմից՝ զոհերի ողորմելի կացության դատապարտված»:

¹⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 novembre 1904, N 98.

²⁰ Կաթողիկոսի այս և այլ նամակների մասին տե՛ս Է. Ա. Կոստանդյան, Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 434:

²¹ Անդրանիկի և Սարհապի (Գևորգ Չառչ) ու Տարոնցու ստորագրություններ կրող՝ 1904 թ. հունիսի 5-ի պահանջագրի մասին մանրամասն տե՛ս Ն. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, հր. Ա, էջ 196-199: Ի դեպ, Ն. Սիմոնյանը հավաստում է, որ սույն պահանջագիրը «չունի Օսմանյան կայսրությունից անջատվելու որևէ վրաստատություն»: Նույն տեղում, էջ 198:

²² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 août 1904, N 92.

²³ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er août 1903, N 66.

²⁴ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1er novembre 1905, N 121.

ների»²⁵: Իբրև այս հավաստման հիմնավորում՝ Քիչետը խոսքը կենտրոնացնում է մասնավորապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենացցուն դրվագներից Խանասորի արշավանքի և Առաքելոց վանքում Անդրանիկի կազմակերպած դիմադրական պայքարի վրա:

Խանասորի արշավանքի մասին Քիչետը, ըստ իր խոստովանության, տեղեկությունները քաղել է 1897 թ. գերմանական «Ցուբուհֆու» պարբերականում լույս ընծայված հոդվածից և ջանացել ընդհանուր գծերով ոչ միայն ներկայացնել այդ գործողության պատկերը, այլև անգամ բացահայտել դրա պատճառները: 1897 թ. հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը ՀՅԹ նախաձեռնությամբ 253 հոգուց բաղկացած ռազմարշավային մի խումբ անցնում է պարսկա-թուրքական սահմանը, ներխուժում Պարսկաստանին սահմանամերձ տարածք և Խանասորի դաշտում խիզախ հարձակում իրականացնում մազրիկ ցեղին պատկանող քուրդ հրոսակախմբերից մեկի վրա՝ հակառակորդին պատճառելով մեծ կորուստներ: Տալով 19 զոհ, ֆիդայիները վերադառնում են Պարսկաստան²⁶: Խանասորի արշավանքը հետապնդում էր գլխավորապես եվրոպական դիվանագիտության ուշադրությունը Հայկական հարցի վրա վերստին հրավիրելու նպատակ և համապատասխանում էր ազատագրական շարժման նոր մարտավարությանը²⁷:

Գիտակցելով Խանասորի արշավանքի կարևորությունը²⁸, Քիչետը, չունենալով ստույգ տեղեկություններ, ուշադրությունն, այդուհանդերձ, կենտրոնացնում է դրա վրա: Նա, սակայն, արշավանքը մեկնաբանում է իբրև ինքնաբերական ծնունդ առած գործողություն և այն պայմանավորում բացատրապես հայ ֆիդայիների վրեժխնդրությամբ²⁹, որը կյանքի էր կոչվել ի պատասխան 1896 թ. Պարսկաստան տեղափոխվող՝ Վանի ինքնապաշտպանության մասնակիցներից շատերի կոտորածի, որոնք մահանջի ճանապարհին պաշարվել էին Աշված քրդական հրոսակախմբի կողմից և անհավասար պայքարում տվել 384 զոհ:

Քիչետի զանազան ելույթներում բազմիցս հիշատակվում են հայ ժողովրդի ազգայնագատագրական շարժման ղեկավար գործիչները, մասնավորապես՝ Աղբյուր Սերոբն ու Անդրանիկը: «Այնպիսի ղեկավարներ, ինչպիսին Սերոբն է, որին անվանել են Սերոբ փաշա, մարտնչել են երկար տարիներ՝ քուրդ և թուրք բռնակալիկների դեմ գործադրելով արդարացված բռնություններ»³⁰: Նա ցավով է արձանագրում, թե ինչպիսի մեծ եղանակներով է իրականացվել Աղբյուր Սերոբի սպանությունը, սակայն միաժամանակ անվարանորեն ընդգծում է, որ Վանում, Մուշում և Սասունում նրա սկզբնավորած պայքարը հաջողությամբ շարունակում է Անդրանիկը³¹:

²⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83.

²⁶ Խանասորի արշավանքի մասին տե՛ս Կ. Զ. Թատոյան, Ելվ. աշխ., Լջ 329-330; Ն. Գրիգորյան, Ելվ. աշխ., Լջ 65:

²⁷ Մանրամասն տե՛ս Ն. Գրիգորյան, Ելվ. աշխ., Լջ 56-57:

²⁸ Խանասորի արշավանքը, ի դեպ, հայրենական պայքարության մեջ տեղիք է տվել իրարամերձ գնահատականների: Եթև Ն. Պողոսյանի կարծիքով արշավանքը ընդամենը «ձախողված գործ էր», ապա Ն. Գրիգորյանն այն համարում է «աննախադաս կրկնություն» հայոց ազատամարտի համար: Վանը. Ն. Մ. Պողոսյան, Վասպուրականի պայքարությունից (1850-1900), Երևան, 1988, Լջ 289; Ն. Գրիգորյան, Ելվ. աշխ., Լջ 65:

²⁹ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 84.

³⁰ Նույն տեղում, Լջ 86:

³¹ Նույն տեղում:

Վերջինիս մասին Քիչեառն արտահայտվում է առանձնակի համակրանքով, նրա գործունեությանն առնչվող դրվագները քննարկում զանազան ելույթներում: Օրինակ, 1904 թ. մայիսին Քիչեառը մանրամասն վերլուծելով նրա առաջադրած պահանջները, մեկ անգամ ևս հիմնավորել է ֆիդայական շարժման գլխավոր պահանջը³²: Ներկայացնելով Անդրամիկի կենսագրությանն առնչվող համառոտ տեղեկություններ, Քիչեառը հանգամանորեն անդրադառնում է 1901 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Մուշից արևելք զտնվող Առաքելոց վանքում վերջինիս կազմակերպած հերոսական դիմադրությանը, որը նպատակ ուներ դիմակայել թուրք հարստահարիչներին և մատնացույց անել հայ ժողովրդի կենսունակությունը³³: Վկայակոչելով իր տրամադրության տակ եղած՝ եկեղեցական սկզբնաղբյուրից բխող մի փաստաթուղթ, Քիչեառը թվարկում է այն հայտարարությունները, որոնցով ազատագրական շարժման պարագլուխը նոյեմբերին հանդես է եկել վանքում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ հակառակորդի պատվիրակների հետ վարած բանակցությունների ընթացքում և դրանք համարում է «արժեքավոր»: Նա Անդրամիկի ներկայացրած հայտարարություններն ամփոփում է վեց կետերում.

«1. Որ ինքն ու իր խումբը ապստամբներ չեն, այլ պաշտպանում են քրդերի զոհը դարձած իրենց հայրենակիցների կյանքը:

2. Որ իրենք երբևէ չեն կողոպտել գյուղերը, հարձակվել բանազնացների վրա, սպանել անպաշտպան մարդկանց:

3. Որ իրենք սպանել են Բշարե խալիլին և երեք այլ քրդերի, որոնք եղել են Օուշմամերկի սպանությունների հեղինակները:

4. Որ փոխարենը (և նա ներկայացնում է ամբողջական թվարկում), ինչպես Մուշի, այնպես էլ Սասունի գյուղերում քրդերն են իրականացրել անհամար կողոպուտներ, զոհություններ, սպանություններ և կոտորածներ:

5. Որ իրենք ճանաչում են սուլթանի իշխանությունը, բայց որ մեկ սուլթանը բավական է և չեն ցանկանում ունենալ ուրիշների՝ հանձինս քուրդ առաջնորդների, որոնք՝ ինչպես սուլթաններ, տնօրինում են հայերի կյանքը և ունեցվածքը, նրանցից հարկեր զանձում և ըստ իրենց քմահաճույքների օրենքներ կիրառում:

6. Որ իրենք անձնատուր կլինեն, եթե երաշխավորվի իրենց և երկրի հայերի անվտանգությունը»³⁴:

Վերլուծելով «ոչ այնքան պահանջկոտ հեղափոխական» Անդրամիկի հայտարարությունները, Քիչեառը դրանք բնորոշում է իբրև «գործողության ծրագիր, որը չի կարող սարսափեցնել ոչ մեկի, նույնիսկ նորին կայսրական մեծությանը»³⁵ և ըստ այդմ՝ ևս մեկ ան-

³² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85.

³³ Առաքելոց վանքում Անդրամիկի խմբի մղած մարտերի մասին տե՛ս Դ. Պ. Աղայան, Եզր. աշխ., Լջ 189-196; Ն. Մ. Պողոսյան, Եզր. աշխ., Լջ 250-253; Ն. Ռ. Սիմոնյան, Եզր. աշխ., Լջ 118-130, Ա. Ս. Նամբարյան, Եզր. աշխ., Լջ 189-191:

³⁴ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85. Տե՛ս նաև P. Quillard., Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 87. Հարկ է կշռել, ի դեպ, որ Անդրամիկն առաջադրել է նաև քաղաքական պահանջներ, օրինակ, ազատություն շնորհել Տարնոնում ձերբակալված քաղաքական հայ ըմբռնություններին: Այս պահանջը վրիպել է Քիչեառի ուղղորդությունից: Տե՛ս Ն. Մ. Պողոսյան, Եզր. աշխ., Լջ 252; Ն. Ռ. Սիմոնյան, Եզր. աշխ., Լջ 124:

³⁵ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904, N 85.

գամ ընդգծում հայ ֆիդայիների առաջադրած պահանջների օրինակառությունը:

Թեպետ Քիչեստոն ընդունում է ազատագրական շարժման ղեկավարների պահանջների չափավորությունը, այնուամենայնիվ չի ժխտում հեղափոխական տրամադրություններին առկայությունը հայերի շրջանում, որը սակայն հիմնավորում է Օսմանյան կայսրությունում առկա օբյեկտիվ պայմաններով: «Իրականում Թուրքիայում, ինչպես նաև Ռուսաստանում հայերն, *անհրաժեշտության դեպքում* (ընդգծումը մերն է – Վ. Պ.), հեղափոխականներ են: Դա չի նշանակում, թե նրանք տուրք են տալիս միայն ահաբեկչությանը և ընդունում միայն խեղահեղ պայքարի անհրաժեշտությունը: Նրանք հեղափոխականներ են, և այդ այն դեպքում, երբ նրանք հպատակներից ամենահնազանդներն են, ինչը բնորոշ է նրանց գերակշռող մասին: Նրանք հեղափոխականներ են, քանզի ինքնակալական, բացարձակ անիշխանության, կրոնական և քաղաքական ճնշումների այս երկրներում ներկայացնում են արևմտյան գաղափարներն ու մշակույթը»³⁶:

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը Քիչեստոն տված գնահատականները միանգամայն իրատեսական են և անկողմնակալ: Նրա ամուրանալի արժանիքներից առանձնացնենք, մասնավորապես, հայ ժողովրդի մղած պայքարին առնչվող խնդիրների քննությունը լայն կտրվածքով: Այդուհանդերձ, այս հարցին նվիրված Քիչեստոնի ելույթների, ինչպես նաև նրա հայանպաստ գործունեության ամենանշանակալից կողմերից մեկը, մեր համոզմամբ, հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի մասին հեռավոր իսկ պատկերացումներ չունեցող եվրոպացի ժամանակակիցներին, երբեմն գուցեև ոչ լիարժեք (օրինակ, Խամաստրի արշավանքի պարագայում), տեղեկություններ հաղորդելն է: Հարկ ենք համարում ընդգծել նաև այս հարցին նվիրված Քիչեստոնի գնահատական ելույթների այժմեականությունը, պայմանավորված թուրք պատմաբանների ձեռնարկած՝ հայ ազատագրական շարժման պատմությունը կեղծելու հանգամանքով³⁷: Այս առումով Քիչեստոն մեկնաբանությունները ձեռք են բերում առավել մեծ նշանակություն:

³⁶ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 mars 1906, N 130.

³⁷ Այդ մասին տես Մ. Գ. Նևրսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., էջ 307-324: